

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

35^{րդ} ՏԱՐԻ

1886 ԱՊՐԻԼ 12

ԹԻԻ 3817

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 12 ԱՊՐԻԼ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆՎԵՐՍԻ ՕՍՄ. ՀԻՒՊԱՏՈՄՆ
ԵՒ ԽՈՌՈՎՈՒԹԻՒՆՔ Ի ՊԵԼՃԻԱ

ԱՆՎԵՐՍ, 15 Մարտ 1886

Մարտ 28 կիրակի օր քաղաքիս Օսմանեան փոխ-հիւպատոս Պ. Վանտըվին մեռաւ 42 տարեկան : Ինչպէս Պելճիքայի մէջ սովորութիւն է երեք օր անթաղ պահել մեռեալն, ուստի 31 շրեքաբթի օր իբրեւ Անվէրսի Օսմ. գաղթականութեան անդամներէն մին՝ գացինք ներկայ գտնուիլ յուղարկարութեան հանդիսին : Այս անգամ մեռեալն կաթոլիկ մ'էր, ուստի քահանայից եւ երգեցիկ մանկանց ներկայութեամբ կատարուեցաւ հանդէսն . կարծեմ անօգուտ չը լինիր մի համառօտ նկարագիր պելճ յուղարկարութեան սովորութեան վրայ : Անվէրս տէգ Առի վրայ աղւոր տուն մ'էր հանգուցելոյն բնակարանը : Բոլոր պատուհաններն ու փեղկերը ամրապէս գոցուած, տան երեսին վրայ Օսմանեան Թուղրան կը կենար . փողոցի երկու դռները բաց եւ զոյգ մը սեւ վարագոյրներ կախուած էին քովերէն վեր առնուած . դռնէն ներս ամեն ինչ սեւ շղարշով փաթթուած էր : Ստորին յարկի երկու մութ սենեակներն, որոց բոլոր կահերն ու զարդերն վերցուած եւ պատերն, ձեղունն ու գետինը համակ սեւեր պատած էին . թեւաւոր աշտանակներու

վրայ չատ մը ճրագներ վառուած կը լուսաւորէին այս երկու տխուր ու մութ սենեակները զորս բոցավառ մատուռ (chapelle ardente) կը կոչեն : Առջին սենեակին մէջ ընտանիքին արու անդամք սեւազգեստ, գլխի բաց, ոտքի վրայ շուրջանակի շարուած էին, իսկ ներքնասենեակին մէջ դադաղը միայնակ սեւ ծածկոյթներով դրուած էր և ի սնարին բազմաթիւ պսակներ դիզուած էին ընդ որս եւ Անվէրսի Օսմ. գաղթականութեան նուիրած մեծ պսակն :

Ժամ 10 ին յուղարկաւորը ընդ որս Պըրլեքսէլի Օսմանեան դեսպան Քարաթօտօրի էֆէնտի եւ այլ հիւպատոսը սկսան կարգաւ դռնէն ներս մտնել ու անցքին վրայ դրուած ափսէի մը մէջ իւրաքանչիւր ոք այցեատմը ձգելով անցնիլ առջին սենեակը եւ շրջան մ'ընելով յոտին կեցող ընտանեաց անդամոց առջեւէն՝ անցնիլ լուռ ու մունջ ներքնասենեակը, դադաղին առջեւ գլխով խոնարհիլ ու շարունակելով մինչեւ դուռը հասնիլ : Յետոյ եկեղեցի տարուելով անդ նոր շրջան մը կատարուեցաւ դադաղին շուրջը ճրագ ի ձեռին եւ յետոյ կառքերով ի գերեզման իյետինն ապաւէն :

Անվէրսի Օսմ. փոխ-հիւպատոսի պաշտօնն սոսկ պատուոյ տիտղոս մ'է և գործնական կարեւորութիւն մը չունի : Այլ Պ. Վանտըվին անհատապէս ազնիւ եւ վստահելի անձ մը լինելէն զատ իր նշանաւոր գործն եղած է Պոլսոյ Խասգիւղի հրկիզելոյ ի նպաստ Անվէրսի հայ եւ հրեայ վաճառականաց ըրած հանգանակութեան նըպաստել իւր ազդեցութեամբ եւ դրամով եւ հանգանակեալ գումարն Յ հազար ֆըրանքի հասցունել . օրհնալ ըլլայ իւր յիշատակը :

Պեճիքայի օրուան մեծ խնդիրն գործադուլներն են : Մարտի 29ն էր . Անվէրսի փողոցներէն կ'անցնէր պեճի գօրաց 8^{րդ} գօրաբաժինն , զինուորական երաժշտութիւնն ի գլուխ , եւ կ'ողջուէր ի կայարանն երկաթուղոյ . պատուհաններն ու փողոցները կեցողներն անձկութեամբ կը դիտէին գօրաց անցը . դէմքերն մռայլ էին . չը կային այն զուարթ ժպիտներն գեղջկուհեաց ու պատանեաց կարմորակ այտերուն ու շրթանց վրայ . մի հծծիւն , մի սաղ փսփսուք կը լուռէր . « Լիէ՛ժ , Լիէ՛ժ կ'երթան . » թէ եւ Մօնս կ'երթային՝ գործաւորաց ցոյցները եւ անկարգութիւնքը զսպելու զինուորացիներու : Եւ իրօք ես իսկ , թէ եւ օտարական մը , անասնորթ տպաւորութեան մը ներքեւ էի տեսնելով զանոնք որք կ'երթային տխուր հարկի մը տակ սպանանել իրենց իսկ եղբարքը , միտքեալ եղբարքը :

Մարդկակային ընկերական հիւանդոտ մարմնոյն պարբերաբար երեւան եկող տենդը այս անգամ նորէն կը բռնէ քիչ մը ամենուրեք , այսինքն Անգլիոյ , Գաղղիոյ , Հոլանտայի , Միացեալ Նահանգաց մէջ , եւ որ կ'սպառնայ մի տիեզերական յեղափոխութեան փոխուիլ . եւ իրաց հաստատեալ կարգերը չընելով դրամագլխի ամենազօրութիւնն գահազուրկ ընել եւ արհամարհեալ գործաւորս զնել ի գահ գերագոյն , եւ ո գիտէ դեռ ինչեր կան պահուած . դիւրակեցիկ եւ տիրող դասուց գլխուն պայթելիք , եթէ սակայն փրկի զայրագին հեղեղն յեղափոխական :

Վարձուց անբաւականութենէն եւ աշխատութեան ժամերու երկարութենէն կը չարչարուն տասնեակ հազարներով գործաւորք ի Պեճիքա , որք օրը 15 ժամ կ'աշխատին անխաճանքերու մէջ եւ նոցա օգնականք 15-16 ժամ , ընդ որս տղայք եւ աղջկուք : Ասոնք օրական կ'ընդունին 1 Փր . 24 սնթմ , 1 Փր . 35 սնթմ , 2 Փր . , առ առաւելն 2 Փր . 50 սնթմ : եւ այս գործաւորն դեռ եւս ունի ընտանիք մը 5-6 հոգիէ բաղկացեալ : Աւելին կայ . այս հասնքերու վրան աշխատող գործաւորք օրը 60 սանթիմ կ'ստանան եւ աւելի քիչ :

Այս գործաւորք օգէ լոյսէ զուրկ , սընունդէ ալ զուրկ են ու ցերեկի ուտեստին համար չէ թէ միս , այլ հաց , կարագ ու

բիշ մը խափէ . չը կրնալով հորերը տանիլ , պարտին բաւականանալ չոր հացով ու ջրով . եւ երբեմն հաց ալ չը կրնալով առնել չոր գետնախնձոր կ'ուտեն : Չունենալով դրամ օրըստօրէական պէտքերն կանխիկ գնելու , պարտին վերատեսչին հաշույն հանքին մօտ բացուած խանութէն ապառիկ եւ սուղ գնել զայնս եւ երբ 15 օրէն օրականներն ընդունին եւ պարտքերնին տան , իրենց բան չը մնար , եւ ոչ իսկ յոյս մը Անանքի տարօրինակ հակադրութիւն : Այս անխաճանքի հորերուն դէմը գործատիրոջ ապարանն կամ գլեակը կը բարձրանայ շրջեղ ու հոյաչէն . նորա ընտանիքը պերճանքի մէջ յղկացեալ է , գիշերն լուսավառ պարահանդէսներու , ցերեկը որսորդութեանց . եւ զօսանաց մէջ : Եւ երբ գործաւորն հորէն դուրս կ'ելնէ կիսահեղձ , աղտոտ , մուրտ , անցած , ստամոքսը դատարկ , մարմնը խոնջ եւ վաստակաբեկ , մտտանջ իւր ընտանեաց կարօտ ու նօթի վիճակով , կը տեսնէ այս ամենը , սիրտը նախանձէն արիւնոտ եւ հոգին դառնացեալ ատելութեամբ կ'երթայ գնել 2 սանթիմի Բեօթլ անուն ընկերակարական թերթն որ իւր հրաչոնջ գրչով այս ատելութիւնը կը գրգռէ ու կը հրահրէ եւ կ'ըսէ անոր . « Խեղճ մարդ , դուն բա՛ն մը չ'ունիս » , կ'աշխատիս ու կը անքնիս եւ քո աշխատութեամբ գոյացած այս ամեն հարստութիւնն ուրիշները կը վայելեն առանց սակայն այդ աշխատութեան մասնակցելու : Դուն եւ զաւակդ պարտիք զինուոր ըլլալ եւ ձեր արիւնով պաշտպանել հողն ուսկից մաս չ'ունիք , ստացուածքներն որք ձերը չեն , եւ հարուստն իւր արիւնը կը խնայէ միայն 1,600 Փրանք փրկանք վճարելով :

Այլ գործաւորն դեռ եւս հանդարտ է , իւր կողմէն պատգամաւորներ կ'ուղարկէ առ գործատէրն որ հաճի յաւելում մ'ընել իւր օրականին վրայ : Հպարտ գործատէրն կամ բնաւ իւր ներկայութեան չ'ընդունիր զանոնք կամ առաջարկնին կը մերժէ (*): Ահա յայնժամ կը լրանան կ'սպառնին միջոցք եւ անկարգութիւնը կը պայթին . խուռներամ կը դիմեն փողոցներն ապակիներ կոտրելով :

(*) Ասոնցմէ սակաւք ընդունած են փոքրիկ յաւելում մը շնորհել :

խանութներն աւարի եւ գործարաններն կրակի տալով, աւազակներու նման բռնի մուրացկանութիւն ընելով եւ այլ զորս գիտէք: Սակայն զարմանալի երեւոյթներ. այս սովամահ ամբոխը ի Շառլըռուա Պ. Պօտու գործարանապետին հռչակաւոր ապակւոյ գործարանն ու դղեակը կրակի տուած ժամանակ Տիկին Պօտուի սենեակէն 8,500 ֆըրանք արծող գոհարեղէն զարդը կը գտնեն ու գետին զարնելով ջարդուբուրդ կը ջախջախեն ոտքերնուն տակ և ո՛չ ոք այդ պատկառելի դումարէն բան մը կ'առնու. . . . : Այլ եւս, ոստիկանութիւնը բաւական չ'է ասոնք զսպելու, զօրք եւ հրադէն պէտք են, կը հասնին ասոնք, կ'ազդարարեն ամբոխին ետ քաշուիլ, մտիկ չ'ըլլուիլ, կրակ կ'ընեն. խեղ մը գործաւորք, ամենքն ալ երիտասարդ, կ'իյնան մեռեալ եւ խեղ մ'ալ ծանրապէս վիրաւոր: Զիւստոր որսորդ զինւորներն կը դիմեն ամբոխին վրայ զանոնք ցրուելու: Մի սոսկալի տեսարան կը պարզուի. շատ մը կանայք կը պատուեն իրենց հանդերձներն եւ իւրեանց մերկ կուրծքերն զօրաց ներկայացնելով նոր Սաբինուհեաց պէս կը գոչեն. « Մեզի՛ զարկէք, մեզի՛ կըրակ ըրէք »: (Ենթադրեալ Պեթ, 29 մարտ 86) Ասոր նման կամ մօտաւոր են ամեն արիւն թափուած գաւառաց մէջ պատահածներն ի Շառլըռուա, ի Լիէժ, Սանթրը, Պօրինափ, եւ եւ:

Այլ կառավարութիւնը պիտի կրնայ միշտ գտնել բազուկներ որք տրամադրութիւն ունենան կրակ ընել իրենց եղբարց ու հարց վրայ. ընկերվարական գաղափարներն կայծակի արագութեամբ կը տարածուին Պելճիքայի ամեն կողմերն. զինուորն ազատ է լրագիր կարդալու (մինչդեռ Գաղղիոյ մէջ անգամ արգիլուած է բանակի լրագրէն զատ թերթ կարդալ), եւ վերջին խռովութեանց միջոցին մի զինուոր մերժած էր կրակ ընելու, զոր ձերբակալելով ձեռնակապելով ի բանտ տարեր են:

Ահա այսպէս մէկ կողմէն գործաւորաց անտանելի չքաւորութիւնն, միւս կողմէն գործարանատէրերու հսկարտ, ժլատ ու դրդուիչ ընթացքը, մէկ կողմէն ընկերվարական դաշնակցութեանց գործակալաց ատենաբանութիւնքն, երկու սանթիմի լրատգիրներն, հինգ սանթիմի տետրակներն,

միւս կողմէ կառավարութեան եւ երեսփոխանութեան գործաւորաց նկատմամբ անփութութիւնն ստեղծեցին ներկայ իրաց վիճակն, մտքերու աղէտալի բորբոքում մը որոյ արձագանքն ամեն երկրի մէջ թնդաց, խորհրդարաններու մէջ հարցումներ եղան, եւ: Ահա որչափ որ կրցած եմ ըմբռնել այս չփոթութեանց առերեւոյթ պատճառներն. կ'ըսեն թէ կան աւելի խորին և աւելի մեծ պատճառներ, մեծ շահեր որոց վրայ շատ տեղեկութիւն չ'ունիմ:

Ահաւասիկ ամփոփումն այն պահանջներու զորս յանուն աղքատ դասուն կը պահանջեն ընկերվարական պետք.

Ա. Օրականներու բարձրացում:

Բ. Աշխատութեան ժամերու նուազում:

Գ. Զինուորական անձնակա՞ն ծառայութիւն, այսինքն փրկանքի ջնջում:

Դ. Մնայուն բանակի ջնջում որոյ տարին 50 միլիոն կը ծախսուի:

Ե. Եկեղեցւոյ բաժանում որոյ տարին 20 միլիոն կը ծախսուի:

Զ. Ընդհանուր քուէարկութիւն. (մինչդեռ ըստ սահմանադրութեան 42 Փրանք 32 սանթիմ տարեկան տուրք վճարողն միայն ընտրող է, եւ 1,600 Փրանք տարեկան տուրք վճարողն ալ Մերակոյտի ընտրելի):

Է. Նոր օրէնքներ գործաւորաց եւ գործարանատէրաց յարաբերութիւնը սահմանող ու կանոնաւորող:

Տեսները յառաջիկային որչափ պիտի կարենան յաջողիլ իրենց ձայնը լսելի ընել տալու. այլ այժմէն պատրաստուած է զինուորական անձնական ծառայութեան ծրագիրն, մատուցանելի առ Պելճիքայի խորհրդարանն, Պրիւքսէլի երեսփոխան Պ. Ուլթրըմօնի կողմէն: Լրագրաց մէջ պայքարն սկսած է:

ՅՐ • ՄԻՈՍԵԱՆ

Կ Ի Թ Ա Կ Ա Ն

Կ Ի Թ Ա Կ Ա Ն ԲՈՆԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Բ.*

Կը շարունակենք մեր դիտողութիւնները մեր մանկավարժական գրութեան յոռութեանց վրայ :

2. — Բռնի կարգաւ կամ պարտաւորութիւնները :

Սա այն սովորական իրողութիւններէն է, որը յաճախակի ի դործ կը դրուին գրեթէ մեր բոլոր վարժարաններէ մէջ ալ : Անուրանալի իրողութիւն մ'է այս, որ նոյնպէս տխուր տպաւորութիւն կը թողու մեր մանուկներէ հոգեկան, բարոյական և մարմնական զարգացման վրայ :

Տեսնենք թէ ի՞նչպէս :

Երեւակայեցէք խումբ մը մեծ ու փոքր, հարուստ ու աղքատ, գեղեցիկ ու տգեղ, աղուատիպ ու դժնէադէմ, հրապուրիչ, անախորժ, կայտառ, եռանդուն, բարեմիտ, համեստ, խղճահար, հանճարեղ եւ նիհար, ապուշ, ծոյլ, կռուասէր, նենգամիտ, չարահնար և նախանձոտ մանուկների խառնուրդ մը, որը դասատան մէջ յանձնուած է Դաստիարակի մը կամ Ուսուցչի մը վերահսկողութեան :

Այս վերջինն՝ առանց երբէք ուշք դարձնելու այդ խառն եւ պարբեր էակների անհատական կարողութիւնների, հակամիտութիւնների եւ բնաւորութիւնների վրայ, փայտի կամ թէ կծու, արհամարհոտ (թէպէտ բացառապէս խելկատակ), դժնեայ, անախորժ, աններող, սպառնալիք եւ ահարկու նայուածքների փոխանակութեամբ կ'ստիպէ մանուկ-աշակերտներն որ անընդհատ կարգան, գրեն կամ պատրաստեն իրենց դասերը : Մեթոտական այս ընթացքը կատարեալ դաստիարակ մ'է, որ կը կատարուի, եւ որի մէջ երկու էակներն ալ իրենց տարբեր դերերն ու հաճոյքն ունին :

Մանուկ-աշակերտներ՝ որոնք ձեւական կը թուութեան վրայ երբէք հաշտ աչ-

քով չեն նայիր, միայն չար գիտակցութիւններ է որ կը ներշնչեն կրթական այս խաղի միջոցաւ :

Դաստիարակն կամ ուսուցիչն՝ որ պարտը կը համարի օրն ի բուն իւր ուղղորդութեան չը վրիպեցնել մանուկ-աշակերտները, դասատան երկայնքն ու լայնքն անհաշուելի քայլափոխերով կը չափէ, միշտ կը հսկէ, շատ անգամ առանց բնաւ աչք թարթելու կը լրտեսէ, թէպէտ երբեմն խորասուզուելով իւր անհատական հաշիւների մէջ ակամայ անուշադիր կը թողու զանոնք իրենց ազատ գործառնութիւնների մէջ, յետոյ յանկարծ կ'սթափի, կը յարձակի այդ անմեղ էակների վրայ, սոսկալի հարուածների տակ կը թաղէ զանոնք, տգեղ կշտամբանքներով եւ թշնամանքներով կը նախատէ եւ կ'սպառնայ : Վերադառնալով իւր անցուդարձն, վերստին իւր անակնթարթ հսկողութիւնն, վերստին իւր լրտեսելու դերերն : Պէտք է կարգաւ, միշտ կարգաւ 5-20 երես, 6-10 գլուխ եւ : Պէտք է սերտել միշտ, մանաւանդ բռնաղբօսման ներքեւ, Պարտաւորութիւն, Թաւաճում-Ելք, Աշխատանք-Ելք, Քերականութիւն եւ : Պէտք է միշտ կըլքել գիրքերի վրայ, անընդհատ պնդուլ, առանց բացառութեան պնդուլ եւ միայն պնդուլ : Բայց ի՞նչ կը հետեւի ասկէ :

— Մանուկ-աշակերտներ, որոնք բռնի ազդեցութեան մը ներքեւ կը սերտեն իրենց դասերը, որոնց քննադատութիւնն կ'ընկճուի պահ մը կամ աւելի ճիշդ օրն ի բուն :

Մանուկ-աշակերտներ, որոնց մտային հետաքոտութիւնն կը դադրի գործելէ, որոնց հոգեկան անկախ ոյժերը երբէք չեն իրագործուիր, արգիլուելով Դաստիարակի կամ Ուսուցչի վերահսկողութիւնէն, եւ որոնց հետաքրքիր նայուածք մի միայն գիրքերի մէկ էջէն միւսին վրայ կը կեդրոնանայ մերենայօրէն :

Մանուկ-աշակերտներ, որոնք կը պարտաւորուին խզել իրենց բոլոր շահագրգիռ յարաբերութիւններ չըջակայների հետ, որոնց հոգին եւ միտքն իրենց պէս երկար ժամանակ կը լուրջով գիրքերի վրայ՝ երբէք չեն կարող ազատ թռչնել ունենալ, մինչեւ իսկ իրենց դասատան մէջ, կամ ազատ եւ հրապուրիչ արշաւներ գործել իրեն

*) Տես Մասիս, թիւ 3810 :

բանտէն դուրս, Մանուկ-աշակերտներ, որք պէտք է ակամայ տխուր լինին, որք պէտք է ակամայ սերտեն առանց ո՛ր եւ է հրապոյրի, որք պէտք է կըռխ'ն միշտ, որոց աչքերն պէտք է դամուին միշտ գիրքերի վրայ, որք պէտք է երկար ժամանակ լռեն, չը հարցնեն եւ չը հետաքրքրուին, այդ մատաղ էակներ, հակառակ դատարարակի փոփոք ըստ ինքեան անհատականութեան, մէկ մէկ հակադատութեան կը լինին դատարարակութեան: Եւ ի՞նչ կ'ընեն, երբ դատարարակն կը հսկէ անվրէպ: Անոնք այդպիսի վարմունք մը բացարձակ սեղմումը նկատելով դէպի իրեն հոգեկան եւ քաղաքական անկախ ոյժերն, կը նախատեն (անտարակոյս իրենք իրենց մէջ) այդ կարգի դատարարակներ, բոլորովին կը հակակրին անոնց, երբէք չ'են յարգեր, կ'ատեն քան կը սիրեն, յայտնի ապստամբութիւն մը հանել կը խորհին անոնց դէմ, մանկավարժական այսպիսի ճնշման մը ներքեւ երբէք չ'են սերտեր կամ պատրաստեր իրենց դասերը, այլ միայն կըռելով բառաքերքի վրայ, մերթ կը խաղան, մերթ կը ծիծաղին, մերթ կը հրմշտկեն զիրար, գիրքերը կը պատռտեն, կը կեղտտեն, եւ մերթ կը քնեն, եւ այս ամենի վերջնական արդիւնքն կը լինի ժամանակի ահագին կորուստ մը, եւ չար անհոգութիւն մը, զոր ձեռք կը ձգեն մանուկ-աշակերտները, միշտ անախորժ հայեացք մը ձգելով իրենց բոլոր դասերի վրայ:

Անգամ մը երբ իրողութիւններն իրենց բնական երեւոյթով խմտատարները, պիտի գտնեն որ մեր դատարարակների այդ օրինակ վարմունքը լոկ քաղաքականութեան է, այն ալ աններելի՛ բռնապետութիւն: Ո՞ր աստիճան անխորհուրդ պէտք է լինին մեր դատարարակներ, ծնողներ, խնամակալներ եւ կրօնական պաշտօնեայներ, որոնք կը կարծեն թէ մանուկներ զուրկ են անհատական քննադատականութենէ, եւ թէ անոնց հոգեկան, քաղաքական եւ մարմնական ինքնագործունէութիւնը պէտք է յանձնուի հզոր-բռնապետութիւնը: Անհիմն տրամաբանութիւն մ'է ասիկա, որը իւր ողբալի կողմերն ունի, եւ որը աննկարագրելի չղձախնդրի ենթարկել կը տայ մեր մէջ միշտ երկրպագելի այդ անմեղ էակները:

Ճշմարիտ ապացոյցներով գիտենք որ,

մանուկներ (ցորչափ ընտանիքի մէջ են) կամ մանուկ-աշակերտներ (ցորչափ վարժարանների, եկեղեցիի եւ գործատների մէջ են) ճշմարիտ համեմատութեան մը մէջ աւելի կը զարգանան, քան եթէ զուրկ լինին ասկէ: Անոնք կը հրապուրուին միայն այն ժամանակ՝ երբ դատարարակն ժպտուն երեսը կը տեսնեն: Բոլորովին անձնատուր կը լինին անոր միայն այն պայմանների տակ՝ երբ այս վերջինն համոզում ձեռք կ'առնու: Ճշմարիտ համոզումն է միայն, որ հրաշքներ կը գործէ մանկավարժութեան մէջ: Ահ, ո՞րչափ եւ ո՞րչափ հեռի ենք այս մենաշնորհէն, վարուելով մեր մանուկների հետ իբրեւ մեր սարսիկներ: Վարժարանների մէջ երբ Դատարարակն կամ Ուսուցիչն բռնի սերտել կամ պատրաստել կը տայ դասերը, երբէք չ'երեւակայեր թէ մանուկ-աշակերտներ խիոյն չար հակումներ կը ներշնչեն անոր այսօրինակ վարմունքէն, որը իրենց մտային ինքնաձեռն ոյժերի վրայ կը բռնանայ: Ո՞չ որ կրնայ ժխտել թէ մի ո՞ր եւ իցէ անախորժ եւ անհաճոյ խոչընդոտներ առաջ կ'եղնէ այդ էակների ինքնագործունէութեան դէմ, տեսակ մը չար հակամիտութիւն կը ծնուցանէ անոնց մէջ: Աներկբայելի իրողութիւն մ'է որ, երբ պարբերաբար, ծանր թէ թեթեւ անհոգութեան, անախորժ իշխանութեան, հակադատութեան ամենադոյզն նշաններ, մանուկ-աշակերտների խիղճը արթնցնելու համար ամենաթեթեւ ակնադիտութեաններ, բռնի կրթութեան եւ ուրիշ բազմաթիւ չեղարկութեաններ ի գործ կը դնեն, մանուկ-աշակերտների հոգեկան, քաղաքական եւ մարմնական ինքնաձեռն գործունէութիւնն խիստ կը սեղմեն:

Անոնց կրթական զարգացման մի մեծ բաւարարութիւն տալ է ուրեմն, երբ փոխանակ բռնի սերտել կամ պատրաստել տալու դասերը կը համոզենք, այսինքն այնպիսի գաղափար մը կը ներշնչեն անոնց, որով ինքնաբերաբար կը կատարեն իրենց պարտականութիւնը:

Կրթական քաղաքականութեան խորագրին ներքեւ կը շարունակենք գրել յաջորդ յօդուածով մանուկ-աշակերտները «Բռնի զըպրոց խրկելուն» ողբալի հետեւանքին վրայ:

ՍԻՄՈՆ ՅՈՎՆԱՆԵԱՆ

Վան, 25 Մարտ 1886

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԷՆ

ԱԶԱՏ ՈՐՄՆԱԳԻՐԳ

ՈՒՍԹԸՐ, 2 Ապրիլ

Ազատ Որմնադրաց ընկերութիւնը, ինչպէս որ յայտնի է, բոլոր լուսաւորեալ աշխարհի մէջ իւր գոյութիւնն զգալի ըրած է: Միացեալ Նահանգաց ժողովրդեան ութսուն եւ եօթ հարիւրերորդը անդամ են սոյն ընկերութեան, հակառակ այն զօրաւոր ընդդիմութեանց՝ զորս կղերը, մանաւանդ հռովմէական եկեղեցին կը մղէ նոցա դէմ: Մեր երկրին մէջ (Տաճկաստան) շատ քիչեր գիտեն Ազատ Որմնադրաց ընկերութեան մարդկային սեռի ընծայած բարոյական եւ նիւթական օգտակարութիւնը: Ընդ հակառակն մեզնէ շատեր տեսակ մը անկրօնութեան միութիւն լինել կը կարծեն, նորա անունն իսկ շատեր կը խառնեն: Հետեւապէս այնքան զգալի եղած չէ մեր մէջ նորա ազդեցութիւնն, որմէ կ'օգտի միլիոնաւոր ժողովուրդ: Ազատ Որմնադրի մը ներքին կենաց, ըսել կ'ուզենք հիմնական վարդապետութեանց վրայօք շատ անգամ զանազան տեսակ կարծիքներ յայտնուած են, անհատից կողմանէ շատ անգամ: Մամլոյ միջոցաւ հազիւ հազ կը համարձակի հրապարակաւս մը դէմ խօսիլ, որովհետեւ կը կարծուի թէ սոյն ընկերութեան կազմութեան մէջ չկայ ոչինչ արժանի քննադատութեան: զի սա բացարձակապէս մարդասիրական է կ'ըսուի, և իբր այն վայելուչ չէ խժրժել նորա մէկ բանի խորհրդապահական օրէնքները:

Ազատ Որմնադրական զօրաւոր ճիւղեր կան նաեւ քաղաքիս մէջ, որոց անդամոց թիւը յիսուն հազար եւ աւելի է կ'ըսուի: Հոս ալ կը կարծուէր երբեմն թէ սոյն ընկերութիւն հակաքրիստոնէական վարդապետութիւն մը կը քարոզէ իւր անդամոց ուստի երբ մէկ բանի օր առաջ ծանուցին թէ «ի յիշատակ ննջեցեաց մերոց պաշտօն պիտի կատարուի», ընկերութեան բարեկամք թէ չարակամք բազմութեամբ դիմեցին ներկայ գտնուիլ հանդէսին որ տեղի ունեցաւ

քաղաքիս ամենէ մեծ սրահներէ միոյն մէջ, ի ներկայութեան հազարաւոր երկու սեռէ անձանց:

Սրահը մեծ ճաշակով զարդարուած էր գոյնզգոյն կտաւներով, մանաւանդ մանիշակագոյն, սպիտակ եւ սեւ գոյները կը տիրապետէին, որոնք կ'ըսուի թէ ընկերութեան ընտրեալ գոյներն են: Սրահի բեմը եկեղեցւոյ խորանի ձեւը առած էր, ելեկտրական կանթեղներով լուսաւորեալ: Խորանի վարագոյրը յամրաբար բարձրանալ սկսաւ ժամը Յին միջոցները, 25 նուագածուներու եւ 50 արու երգիչներու քաղցրիկ իսկ տխուր եղանակով, որ յարտասուս շարժեց բոլոր հանդիսականները: Վարագոյրին ետեւը եւ բեմին կեդրոնին վրայ չիւրիմ մը կար 16 ոտնաչափ երկայն և 15 ոտնաչափ բարձրութեամբ չորս աստիճաններու բաժանեալ: սոյն չիւրի գագաթը թաւչեայ եւ արծաթեայ զարդերով պատրաստեալ դադաղ մը դրուած կ'երեւնար, որուն դէմը եօթը մեծ աշտանակներ կը փայլէին, սուրբն Պետրոսի այցելած եօթն եկեղեցիները ներկայացնելու խորհրդով: Մէն մի ճրագի մէջ տեղ լեցուած էր սպիտակ եւ մանիշակ ծաղիկներով եւ ասոնց բոլորին վրայ կը հսկէր ոսկեզօծ մեծ խաչ մը մէն մի անկիւնի վրայ կանգնած: Սոյն խաչերէ զատ ուրիշ մեծ խաչ մը եւս կար դադաղի ճակատը դրուած որուն վրայ հանրածանօթ Յ. Ն. Թ. Հ. գիրերը կ'երեւնային եւ ասոնց ալ վերին մասին վրայ մեծ եւ սպիտակ գիրերով «ի յիշատակ» գրուած էր: Շիրիմն իւր սլարագաններով ծածկող ամպշովանի մը եւս չորս գաւազաններու վրայ հաստատուած, և ասոնց ծայրերը դարձեալ սպիտակ խաչերով կը վերջանային, վարդերով եւ որթերով պատեալ: Շիրիմը չրջապատած էր նաեւս հետեւեալ արձաններով՝ Մարտիրոսութիւն, Յոյս, Հաւատ: Սոյն արձաններուն յենած ահագին մեծութեամբ տախտակի մը վրայ ոսկեզօծ գիրերով արձանագրուած էին մեռելոց անուանք, որոնց ի յիշատակ կը սօնէին մեռելոցի պաշտօնը, ըստ օրինի Ազատ Որմնադրաց կանոնադրութեան: Դադաղի երկու ծայրերը խնկամաններու մէջ անուշահոտ խոնկեր կը վառէին միօրինակ: Շիրիմն ճակտի կողմը Ազատ Որմնադրաց առաջնակարգ անդամներէն ութն անձինք

սպիտակ չափերին եւ ուրարներ հագած նստած էին, եւ ասոնց առաջնորդ վերա-
յարգելի պաշտօնեայն կուրծքին վրայ փոք-
րիկ խաչ մը եւ աղամանդներ կը կրէր եւ
գահին մը վրայ բազմած էր :

Մէկ քանի վայրկեան վերջը ի յիշատակ
ննջեցելոց աղօթքներ սկսան կանխապէս
« Հայր մեր որ յերկինս ես » ըսելով . յետ
որոյ պաշտօնեայք կարգաւ յառաջանալով
դագաղի դէմը ծուր դրին, բազուկներին
կուրծքերու վրայ դրուած . վերջը ոտքի
կանգնելով շիրմին չորս կողմը անդաստան
դառնալով եւ ննջեցելոց անունները կոչե-
լով մի առ մի ճրագները մարեցին, ի նշան
մահուան : Երբ բոլոր ճրագք մարեցան եւ
եկեկտրական լլցսեր նուաղեցան, տիւր
միանգամայն ահուելի տեսարան մը ներկա-
յացաւ մեր աչերուն, մահուան երեւակա-
յութեամբ արդէն բեռնաւորեալ մտաց վը-
րայ, եւ շատ ազդու տպաւորութիւն մը
բաւ : Բոլոր հանդիսականք կուային : Տե-
սարանը հիանալի էր : Աստուած կատարե-
լապէս տիրեց հոն վայրկեան մը : Սոյն տիւր
եւ հարկու վայրկեանին սկսան Ազատ Որմ-
նադրաց հաւատոյ դաւանութիւնը, եւ որ
կը բաղկանար « Աւստել հաւատարմ մնալ
Բահան եւ Խաչն » երգի մէջ . ասկէ ի զատ
նոյնիմաստ մէկ քանի ընկերութեան յա-
տուկ երգեր երգեցին : Մինչդեռ սոյն եր-
գեր կը շարունակէին, Ազատ Որմնադրաց
պաշտօնեայք եռանկիւնի ձեւով ծուր ի-
ջած կ'աղօթէին . յանկարծ դագաղը սկսաւ
ծանր ծանր գերեզման իջնել եւ այս կեր-
պով բոլորովին անյայտ եղաւ մեր տեսու-
թենէն, որուն յաջորդեց հիասքանչ խաչ մը
եւ թաղ մը, ներկայացուցիչը յաւիտենա-
կանութեան : Ահա այս կերպով վերջացաւ
սոյն նշանաւոր հանդէս որուն նկարագրու-
թիւնը յոյժ չափաւորեցինք, մեր նամակը
չ'երկարելու նպատակաւ : Երկու խօսք եւս
եւ վերջացնենք : Պօսթօնի ամենէ երեւելի
քարոզիչներէ Մինօթ Աէվէյճ իւր շարադրած
մի բանաստեղծութիւն ի ձեռին սրահի բեմը
ելաւ, Ազատ Որմնադրաց հանդէսի աւար-
տելէ վերջ եւ մէկ քանի պատշաճական խօս-
քերէ յետոյ սկսաւ կարդալ զայն, որուն մէկ
մասը այր եւ կին երգեցողաց միջոցաւ յե-
տոյ երգեցին, եւ այս կերպով հաստատ-
ուեցաւ անգամ մը եւս թէ սոյն ընկերու-

թիւն եւ իւր նպատակ հակաքրիստոնէական
չ'ըլլալէ ի զատ, պարզապէս քրիստոնէու-
թեան մի ճիւղն է, տարբեր ծէսերու եւ
տարբեր արարողութեանց միջոցաւ գոր-
ծադրելի, եւ որ աւելին է մեզ արեւելք-
ցոցս համար ծիսական արարողութեան ար-
դիւնաւորութիւնն է որ սոյն ընկերութեան
հանդէսի միջոցին այնչափ զօրաւոր կերպով
յայտնուեցաւ, յուզելով հանդիսականները,
յարտասուռ չարժեքով զանոնք զոր հարիւ-
րաւոր եկեղեցիներու հազարաւոր քարոզիչք
անծէս եկեղեցեաց, ի զուր կը ջանան ձեռք
բերել, որովհետեւ կ'երեւնայ թէ եկեղե-
ցական ծէսը նոյնչափ հարկաւոր է հիմնա-
կան պաշտամանց որչափ որ նոյն ինքն ե-
կեղեցին . դէթ այս ակներեւ եղաւ սոյն
հիանալի հանդէսի միջոցին, որուն թողած
տպաւորութիւնն անկարելի է վանել մեր
երեւակայութենէն : Երջանիկ Ազատ Որմնա-
դիրք . . . :

Մ. ԹՓՃԱՆԵԼԵԱՆ

ԳԱԻԱՌԱՅ ՎԻՃԱԿԸ

ՄԱՐԶՈՒԱՆՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԸ

Ա.

Առաջնորդական խնդիր մը որ շատ տա-
րիներէ ի վեր ծագած է ի Մարզուան եւ
յ'Ամասիա, դեռ իւր լուծումն ստացած չէ :
Խոլտամեան հայր սուրբը, որ Եդեսեանի
մահուընէ յետոյ դարձեալ ի վիճակս վե-
րադարձաւ, չը կարողացաւ ցարդ ո'չ տե-
ղական ազգային անխնայութեան վերջ
տալ եւ ո'չ կրօնափոխութեանց առաջըն
առնուլ :

Խոլտամեան հայր Մարզուանէն Ամա-
սիա, Ամասիայէն Հաճի-գիւղ, անկէ Քէօփ-
րիւ համտեսելով չրջեցաւ, չրջեցաւ եւ վեր-
ջապէս նետեց ինքզինքը Վոսիփոր :

— Դպրոցական խնդիրը բարեկարգելու
համար, Հոգաբարձութիւնն փութաց այլ եւ
այլ միջոցներ ձառք առնել, եւ Պոլսոյ Ու-
սումն . Խորհուրդին աջակցութեամբ հրա-
ւիրեց դՏ. Գ. Փիլոսոֆեան, որ վեց ամիսէ

հետէ աստ է: Բայց Ազգ. Ժողովը չիրցաւ գործակցիլ Ն. Մեծապատուութեան հետ եւ մեծ վախ կայ որ վերջապէս ստիպուի հրաժարիլ Տ. Փիլիպոսեան եւ դպրոցը ինչայ նորէն իր անկերպարան վիճակին մէջ: Ամիսը կը ծախսեն իբրեւ ամսական վարժապետաց կարգաւ 600+180+175+150+135+125+100. աղջկանց վարժ. 150=1,615: Ազգային կալուածոց յոռի մատակարարութեամբ սոյն ծախքերն գոցելու հնարը չը գտնուելով, փոխանակ զանոնք հաւատարիմ ձեռքերու յանձնելու, կը խորհին վարժապետաց ամսականները զեղչել եւ կամ զոմանս հանել ի պաշտօնէ: Իբրեւ թէ ճարահատ, աղջկանց վարժարանի վերաշինութեան համար բացուած 500 մէճիտի հանգանակութիւնն եւս սմա կը յատկացնեն, որոյ 350ը ծախսուած եւ այժմ հանգանակեալ 80ն եւս ծախսելու վրայ են:

— Զարխաբան Ս. Աստուածամօր վանքն եւս դեռ չունի կանոնաւոր վարչութիւն մը. անանկ վիճակ մը ունի որ եկամուտը փլածներուն չը բաւեր: Զգիտեմ ինչպիսի սրտով մը լուսահոգի Նդեսեան երբ էժլա կը գրուէր, իւր բուն արժէքին կրկնապատիկն և երբեմն քառապատիկն գրել տուած էր վանուց արտերուն գինն: Հաճի-գիւղացի ազգայնոց ջանիւք նոր ի նորոյ գըրուիլ սկսելով նախկին 480,000 դահեկան արժէքն իւր բուն արժէքին որ է 230,000ի իջաւ: Ամէն տարի տուրք կը տրուէր 2,440 դահեկան, այսուհետեւ պիտի տան 1,440: Յիշեալ ազգայինք կ'աշխատին նաեւ 13 արտավարին արժէքը բաշխել տալ իբրեւ վագը՝ եւ յուսալի է որ յաջողին:

Բ.

Կաթովիկ հասարակութիւնն՝ որ մինչեւ տարի մը յառաջ յոյժ աննշան դիրք մը բռնած էր, այս տարւոյ միջոցին մէկէն սկսաւ արտասովոր շարժումներ ընել, որում յոյժ նպաստեցին Ճիզվիթ հայրերն եւ Ազարեան սրբազանի երկու անձնուէր պաշտօնեայք՝ Աշճեան եւ Շաղալեան եպիսկոպոսք: Համառօտիւ կ'ուզենք պատմել այս ձկտմանց սկզբնաւորութիւնն եւ շարունակութիւնը: Քաղաքիս մօտ կայ Եփեսոս անուն հայ գիւղ

մը 50 տունով: Սորա քանի մը տարի առաջ Նդեսեանի կենդանութեան անոր դիմելով կը խնդրեն ընծայացու մը, ան ալ կուտայ իրենց Թեփիկեան սարկաւազը: Թեփիկեան իւր պաշտպանին հլու անձ մը ըլլալով, կէտ առ կէտ կը հետեւի նորա շաւղաց, իսկոյն կ'սկսին խռովութիւնք, եւ Թեփիկեան ասով չը գոհանալով մեծկակ դումար մ'ալ իւր փողը կ'անցնէ եկեղեցւոյ շինութեան գումարէն: Եկեղեցին կիսկատար մնալով Եփեսոսից կը դիմեն տեղւոյս Ազգ. Ժողովոյն, բայց ժողովն բան մը չը կրնար ընել. եւ ի վերջոյ ստիպեալ Եփեսոսեցոց թախանձանքներէն Թեփիկեան սաստկապէս հաշիւ կը պահանջէ: Թեփիկեան քանիցս վախուտ կուտայ եւ երբ հասկցաւ որ ալ անկարելի է դիմադրել, Ճիզվիթ հարց դիմեց եւ սուրբ հաւատքը ուրացաւ: Այս առթիւ Ճիզվիթ հարք ժողով մը հրաւիրեցին յորում Թեփիկեան աղատօրէն վիճեցաւ իբրեւ թէ Հռովմայ եկեղեցւոյն հաւատալեաց վերայ, եւ վերջապէս խորին համոզմամբ ընդունեցաւ Պասը: Ճիզվիթ հարք վրութեան քանի մ'ամիս յետոյ զԹեփիկեան ղրկել ի Տրապիզոն որ հոն վարդապետ ձեռնադրուելով այժմ Եփեսոսէ երթալու վրայ է, անշուշտ լինելով որ զանոնք դարձի պիտի բերէ:

Անցնինք պատմել համառօտիւ նաեւ թէ Ճիզվիթ ինչպէս Զորում մտան:

Զորում քաղաքէս ինն ժամ հեռի կարեւոր կեդրոն մ'է: Հոն կան 80 տուն հայք, մեծաւ մասամբ Կեսարիայէն դաղթած, որոյ թուականն 1865ը չ'անցնիր. Եղեղտու առաջնորդական թեմին իրաւասութեան ներքեւ են սորա: Ի սկզբանէ հետէ իրենց մէջ խռովութիւնք պակաս չեն, միշտ երկու կուսակցութեանց բաժնուած են: Շատ անգամ ջանացած են միանալ, բայց անձնական վատ նկատումներ յոյժ կարճատեւ ըրած են իրենց հաշտութիւնն: Զորս տարի առաջ Ղեւոնդ եպիսկ. Շիշմանեան մեծ առիթ մ'ունէր զանոնք միացնելու, բայց այնպիսի ընթացքի մը հետեւեցաւ անդ որ բոլոր յոյսեր ի դերեւ ելան: Սոյն երկու կուսակցութիւնք կը կոչուին մեծամասնութիւն եւ փոքրամասնութիւն: Զեմ գիտեր ինչպէս միանալով, քանի մը տարի առաջ շինեցին եկեղեցի մը եւ վայելուչ դպրոցի

չէնք մը : Կայ քահանայ մը , որ մեծամասնութեան կը պատկանի . միւս կուսակցութիւնն եկեղեցի չը յաճախէր . եթէ քահանայի պէտք ունենայ Մարգուանէն բերել կուտայ , մինչեւ անգամ ննջեցեալի նաեւ տաղաւարներու առթիւ : Երկու վարժապետ ունին , ոչ մին գոհացուցիչ է . եւ վերոյիշեալ շէնքին մէջ կը կարդացնեն , միշտ կը ունելով : Փոքրամասնութեան մէջ կը գտնուի սեքսստայի կոչակար մը , որ բողոքական եղած եւ հոն շատ մը խռովութեանց տեղի տուած էր եւ վնասուած . դարձեալ լուսաւորչականութեան յարելով աստ եւս խռովել սկսած էր : Բայց հոն ալ սկսած էր գոյնը դուրս տալ . եւ որովհետեւ չը կար ուրիշ դաւանութիւն մը հոն , որոյ հետեւէր , Ամասիա գնաց եւ Ճիզվիթ հարց դիմեց , որք երկրորդել չը տուին առաջարկը . ուստի երկու քահանայ զրկուեցան անդ , որք մեծ շէնք մը վարձելով դպրոցի եւ եկեղեցւոյ յատկացուցին : Բազումք հետաքրքրութեան համար կ'երթան անդ , մինչեւ մէկ ամիս . եւ Ճիզվիթ հարց ճարակութիւնն զանոնք կ'որոշայ հուսկ ուրեմն . այժմ չորս տուն հայ յարած են իրենց , եւ որովհետեւ Զորումի հայ քահանայն բողոքովին ապիկար անձ մի է , շատ հաւանական է որ չալիտի կրնայ դիմադրել կրօնախոխութեան անդիմադրելի հոսանքին :

Կայ ի Մարգուան ազգայնոց մէկ ճիւղը , որ միշտ լքեալ մնացած է , միշտ անարգուած եւ կեղեքուած է հաւասարապէս թէ՛ կղերականներէ . եւ թէ՛ աշխարհականներէ : Սոքա են : Կայ քահանայ մը , 1850 տունի չափ ուրոյն թաղի մը մէջ , դպրոց չունին եւ իրենց վաւակներն չեն զրկեր ազգային դպրոցը եւ իրենց տգիտութեան մէջ յոյժ հակամէտ են ինչպէս ի ծուղակս մարդորսաց :

Հայ-բողոքական երիտասարդաց ընկերութիւնը , որ քաղաքիս մէջ երեք վարժարաններ կը պահէ , ասոնց մէջ ալ բացած է վարժարան մը , եւ կ'աւանդէ ազգ . դաստիարակութիւն մը : Ճիզվիթ հարց աչքէն չէ վրիպած այս յաջողութիւնն , ուստի սկըսան յաճախել հոն , նստիլ անոնց հետ , խօսակցիլ եւ պատուել զանոնք , որք յոյժ համակրայից կերպով արձագանգ կը գտնեն խեղճ բոլաներու սրտին մէջ . քանզի մինչեւ ցարդ չէ տեսնուած հայ եկեղեցական մը՝

որ ասոնց ցաւակից եւ վշտակից ըլլալով մխիթարէ , իրենց հետ ուտէ եւ ըմպէ , գծտեալներն հաշտեցնէ : Ահա քաղաքիս յիշերը դիտեն անոնց սրտին ցաւը եւ մեր ազգայնոց անողորմելի խստութիւնն արոց հաւաքման մասին : Արդ շատ խորհելէ յետոյ , յանկարծ առաջարկ մը կը ներկայանայ իրենց թէ , Ճիզվիթ հարց կը խոստանան իրենց տուրը Պոլիս կեդրոնին յանձնել իրենց անտուկէն եւ բաշխել անկարողներուն պարտքը եւ անոնց որ կրնան տալ ընդարձակ պայմանաժամ շնորհել : Մէկէն կ'արթննայ այս աղքատներու սրտին մէջ ընչաքաղցութիւնն եւ կ'որոշեն խմբովին երթալ եւ Ճիզվիթ հարց ոտքերը համբուրել : Ահա այս կերպով հարկաւոր անձինք այսօր ազգային եկեղեցիէն անջատուելու վերայ են :

Յարենք միայն թէ կաթոլիկաց դպրոցը յոյժ բարեկարգ է . ունի արժանաւոր պաշտօնեայներ , բոլորն ալ լուսաւորչականաց կողմանէ լքեալ , եւ Ճիզվիթ հարց վարձատրելով արժանապէս , հրապուրեցին զնոսա մընալ իրենց մէջ : Հիմնական կերպով դործը յառաջ վարելու համար , ձեռնարկած են զիշերթիկ վարժարանի մը հիմնարկութեան , ճիշդ մեր Ս . Աստուածածնայ վանուց կից տեղ մը առնելով ընդարձակ գետին մը , ուր գարնան պիտի սկսին շինել վանք մը : Ասոնք խօսք չեն , հապա իրողութիւններ , եւ տեսնենք թէ ի՞նչ պիտի ընեն մեր վանուց որովայնապարտ միաբաններն :

Ի վերջոյ՝ Բեօֆթիս ուր ազգայինք ի բաղմաց հետէ ցաւակի երկպառակութեամբ կը հեծեն եւ տեղոյս առաջնորդութիւնն բան մը չ'ընեն , մեծ վտանգ կայ որ բազումք զոհ երթան : Ի Հաճա , ուր դանուող 50 տուն հայերն ո՛չ եկեղեցի ունին , ո՛չ քահանայ եւ ո՛չ դպրոց , բողոքովին կ'որուսեալ պէտք է համարինք , երբ անդ գոնէ միանգամ այցելեն , որ անխուսափելի է : Ինչպէս եւ Ափթիս նոյն վիճակին ենթարկեալ խեղճ եւ տղէտ գիւղեր են , առանց հոգեւոր եւ մարմնաւոր մխիթարիչներու եւ եթէ այս տեղեկութիւններ չը ցնցեն Կրօնական Ժողովոյ Գեր . հայրերն , քիչ ժամանակ յետոյ անոնց վրայով ալ տխուր լուրեր տալու հարկին ներքեւ պիտի գտնուին :

Եթէ հարցուի թէ , ինչո՞ւ մինչեւ ցարդ

պապականութիւնն հոն մտած չէ, կ'ըսենք թէ կառավարութիւնն զօրեղ կերպով կ'ընդ-դիմանար յիշեալ եկեղեցականին (Աշճեան) գաւառիս ամէն կողմ շրջագայութեանն. այժմ այդ արգելքը վերցած է շնորհիւ Ա-զարեան սրբազանի եւ միայն ժամանակի կը կարօտի: Յիշեալ գիւղերու ազգայնոց վիճակն յոյժ նպաստաւոր է սոյն ձկտմանց յաջողութեան. քանզի ո՛չ հովիւ ունին եւ ո՛չ իրենց չահերը պաշտպանող կազմակեր-պութիւն մը:

ՎՏԱՐԱՆԴԻՆ

ԷՆԱՐԻ ՖԵՐՀԱԴ(*)

(ՊԱՐՍԿԱԿԱՆ ԶՐՈՅՑ ՖՐԻԴՈՒՍԻԻ)

Էյ սաբա՛հ, գէր բգուղէրի բէր սահիլն ջուրն Երբ՝
Բո՛ւսէ դան բէր խաքի ան, վաղիւր—մուշքիւնի
փէր...

Ո՛ր զեփիւռ, Թէ կը մղուիս դու Երբ գետի ափերին՝
Համբոյր մի տուր նորա հողին, նորա զաւակ սուրբ
վարդին (1)...

Շիրին մի հիւրի—փերի է. հիւրի—փե-րիները նախանձում են նորա գեղեցկու-թեան վրայ, որովհետեւ չ'ունին նորա ա-ղեղնածեւ յօնքերը եւ զմրուխտից աւելի փայլող սեւ—մեծ աչքերը. չ'ունին նորա լուսնի հետ խաղացող սպիտակ եւ նուրբ դէմքը. չ'ունին նորա մուշկից հոտաւէտ այ-տերը, նորա վարդի նորածիլ թերթերունը—ները գերազանցող շրթունքները, նորա հա-սուն շա՛մօ՛ր² փափկութեամբ ծծերը, նորա հրեշտակային փոքրիկ գիրգ ձեռներն եւ կաքաւի նման թռչկոտելու պատրաստ ոտ-ները:

Շիրին անման է. Շիրազը³ չ'ունի իւր մէջ ուրիշ Շիրի եւ շէրէն⁴ Շիրիի վրայ է կեղ բռնացել — նա է շէրէնը, նա է Բո-ղէնը՝ նորա մաղերի հետ է խաղում «աբահ»⁵, նորա բերնից են, որ բղխում են ֆէշազը⁶ եւ մարգարիտը. նորա խօսքերն են, որ մըր-

մընջում են լեռնից հոսող մանր, բաղդրա-համ ջրերով առուակների պէս:

Շիրին հիւրի—փերի է.

Եւ Ֆէրհադը սիրում է Շիրինն, Շիրին Ֆէրհադին:

Ֆէրհադը պատրաստ է Աբէրս—Բնասպարէ⁷ ակնից, Բո-հէ Ալլահ—Էպէրէ⁸ իրեն ջրի հետ վար գլորիլ, որ գնայ անցնէ Գեւեղէշէ⁹ մա-սալլայէ⁹ դաշտից, ուր, գետափի մօտ նըս-տել է Շիրին, մաղերը ուսի վրայ սփռած, խաղում է կիթառի լարերի հետ եւ հրեշ-տակները խոտերի մէջ թաղուած, լսում են նորան: Շունչ չեն առնում, զմայլմամբ դիտում են նորա մեղկօրէն ել եւ էջ անող ձիւնափայլ կուրծքը, հաւաքում են օդի միջից, չեն թողնում կորսուելու նորա ձայնի թրթռումները... Եւ երկինքը դատարկ է իւր բնակիչներից: Բոլորը Շիրինն են լը-սում, որը իւր Ֆէրհադն է երգում:

Ֆէրհադը չէ՛ կամենում, որ իւր Շիրին պարզ ջուր խմէ. նա կաթ է եւ ջուր Երբ¹⁰ կաթը պիտի խմէ. Ջուր Երբ Ալլահ—Էբադէր սարերի խորն է. Ֆէրհադը ջօշափեց իւր Շիրիի շրթունքները, որոնք նորան վառե-ցին, նորա սիրբը ուռեցրին. Ֆէրհադը կորցեց իւր տապարը, գրկեց Շիրինն.

— Քեզ Ջուր Երբ — հիւրի—փերիների գետը կ'ուղարկեմ այս ջրի տեղ, ասաց եւ գնաց լեռների մէջ:

Շիրին չա՛տ լաց եղաւ. նոտեց գետի եղբրբում եւ Ֆէրհադը լերան խորերից պե-ղում էր գետակը եւ նորա ջրերը իւր ա-կանջին էին հասցնում Շիրիի կիթառի ձայ-նը...

Եւ նա պեղում էր... կատաղի կեր-պով պեղում էր:

Չար ոգիները աւելի խորն էին տանում Ջուր Երբին, սակայն Ֆէրհադը բաջ էր եւ նորա տապարը չա՛տ սուր. Շիրիի երգը նորա խրախոյան էր եւ նա պեղում էր ու պեղում...

Երկինքն այլ եւս չէր երեւում: Ֆէր-հադը գետնի տակն էր, երկինք չէր ուզում տեսնել. Ջուր Երբի ձայնը լսում էր, իսկ գետակի ջրերը մինչեւ խորի բերանն էին բերում Շիրիի կիթառի ձայնը, «աբահ» ժո-

(*) «Ֆէրհադի նրններն». — մի տեսակ նուններն է:

դուրսում էր նոցա եւ մղում էր դէպի պատանոյ ականջը :

Եւ Ֆէրհադը անդադար , գիշեր ցորեկ պեղեց :

* * *

Նորա տապարի ձայնից վախեցած ցըրվում էին չար ոգիներն եւ Զուի Շիրը մօտենում էր . յանկարծ վերջին հարուածը թնդաց , ակը բացուեց , Աբիրուքնապատը ետ քաշուեց , տեղ տուաւ Զուի Շիրին , որը դուրս վիժեց նորա տեղով :

Նորա ջուրը դուտ կաթն էր եւ կաթի երեսին փայլում էր փրփուրը : Ֆէրհադը գօտիից անցուց իւր նռնենիի փայտէ կոթով տապարը , կուացաւ , բերանը մօտեցուց Զուի Շիրի բղխած ծայրին եւ գետը յառաջ վազեց , անցաւ լեռների միջից ու մտաւ դաշտը . Շիրին պիտի խմէր այդ ծայրից :

Եւ Ֆէրհադը ջրային այդ համայնը ուղարկած՝ դուրս թռաւ գետնի տակից , պատրաստուեց վազել դէպի Շիրին . արեւն իւր դէմքը ցոյց տուաւ նորան , նորա դէմքն արեգակի դէմքից չէր փոխվում :

Ոտքը վերցուց վազելու , յանկարծ առհը մի խուլ մրմունջ մղեց դէպի նորա ականջը . նա լսեց , պառկեց , ականջը Զուի Շիրի ջրերին տարաւ . կարծում էր թէ պիտի լսէր նորէն Շիրիի հրեշտակային ձայնը , բայց ջուրերը միմիանց ետ մղելով գալիս էին , յուզուած դէպի ակը դարձան , դահավիժեցին լեռան խորերը եւ հասցրին Ֆէրհադի ականջին :

— Դա՛տ ուշ էր . . . Շիրին մեռա՛ւ . . .

* * *

Շիրին մեռա՛ւ , չա՛տ ուշ էր . . . անգութ գետ , Ֆէրհադը քեզ լոյս աշխարհ հանեց եւ դու նորան անդճնդն ես գլորում . . . ա՛խ Ֆէրհա՛դ , արեւդ պակասեց , այլ եւս չը կայ Շիրին , հրեշտակները թռան . Զուի Շիրը յուզուած իւր տեղը դարձաւ եւ Աբիրուքնապատը իւր նախկին դիրքը ընդունեց :

Ֆէրհադը ընկաւ երեսի վրա . ո՞րտեղից էր արտասուք նորան . . . գետի ջրերը արիւնի գոյն ունէին . . . արեւն էլ խաւարում էր :

Ֆէրհադը ետ նայեց . չար ոգին պառաւի դէմքով կուացաւ դէպի նա , մի քրքիջ արծակեց եւ գոռաց .

— Մեռա՛ւ Շիրին . . .

Եւ Ֆէրհադը կորզեց իւր տապարը ու իւր վզին խփեց . . .

Ընկաւ գլուխը . . . արիւնը մի գետակ կազմեց եւ տապարի նռնենի փայտէ կոթը վարսուեցաւ գետին :

Իսկ Ֆէրհադի արիւնը այդ փայտին սընունդ , Աբիրուքնապատը ջուր տուաւ , ծլեցրեց եւ իւր ափերում բուսաւ նռնենին , որոյ պտուղը ո՛չ մի տեղ չը կայ , որոյ հատերը արեան գոյն ունին եւ որոյ պլտուղներից մէկի մէջ , ամէն տարի , գտնվում է երկու աճիւնացեալ՝ միմիանց միացած սրտեր . . .

Ֆէրհադը եւ Շիրին են դոքա . . .

Թարգմ. պարսկերէնից Վ. ՓԱՓԱՋԵԱՆՑ

¹ Մուշքիյն մի տեսակ մանր և բազմատերեւ վարդ է , որը բնութիւնէ գարնան վերջերում : ² Մի քաղցրահամ և անուշահոտ պտուղ է : ³ Պարսկական բանաստեղծից քաղաքը : ⁴ Քաղցրութիւն : ⁵ Զգիւն առաւօտեան : ⁶ Մի թանկագին ակն , որը հանում են Նիշապուր քաղաքի լեռներից : ⁷ Մի գետ է Շիրազի մօտ : ⁸ Մի բարձր լեռ Շիրազի մօտ : ⁹ Մի ծաղկաւէտ դաշտ Շիրազի մէջ : ¹⁰ Առասպելական հիւրիփերհներն գետը , որը ջրի տեղ կաթն է հոսում :

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԳԱՐԾԱՆԻ ԱՂԿԵԿԸ

(ԳԱԻԱՌԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂՆՈՒԹԻՒՆ)

Օրորի¹ ջուրն անցանք ելանք ի Դարման² Դարման աղկէկ մը կար անունն էր Մայրամ , Անունըդ չը գիտեմ կանչեմ Սրգուխան , Արգուխա՛ն , Արգուխա՛ն Ալամի սուլթան³ :

Մայրամ մի՛ լա , մի՛ լա , աշուիդ կ'աւերի , Քեզ պղտիկ տանողին դռնին աւերի . Առաւօտուն կ'ելլէր պազ պազ հովերը , վերէն կուգար Լուսաւորչայ կովերը⁴ Ակնջունին անցուկ ոսկի օղերը :

Ես որ վարէն կը գայի դուն դուռը բացիր
Ձեռքդ երեսիդ դրիր ա՛յն ըրիր լացիր,
Ըսիր կ'առնեմ կ'առնեմ յօրի՞՝ խաբեցիր,
Սէրդ կրակ ըրիր վրաս թափեցիր.
Սէրդ աշուն պիտէր սէվտայդ ի դարուն,
Սիրտս կրակ ինկեր կ'այրէր զանբարուն՝⁶:

Օրօրի ջուրն անցանք ելանք ի Դարման,
Դարման աղկէկ մի կար անունն էր Մայրամ,
Աղջիկ շատ աղուոր ես մայրդ կը նմանիս,
Գարնան սիրած մաքուն գառը կը նմանիս:

Աղջիկ բեզի կ'ըսեմ Դերջան ո՞ր տեղն է
Ձայիր չիման պաղ աղբրկայ վերի դին է.
Երեսդ աղուոր է պաղնելու տեղ է,
Ծծերդ ճերմակ է մէրմէր քարի պէս,
Ծոցերդ տաքուկ է հիւանդի դեղ է,
Միջքուկդ բարակ է գրկելու տեղ է:

Եկու երթանք աղուընկներու պաղարը,⁷
Ծառները ծաղկեր է թափեր խաչալը
Ո՞ր է իմ երեկի սիրած կուզէլը.
Առնեմ սիրուն եարըս ելնեմ լեռները,
Քաղեմ վարդ մանուշակ դնեմ բեռները,
Սայրիմ՝⁸ ծոցերդ իմա առնեմ հոտերդ:

Հաւաքեց

ՏԻԳՐԱՆ Մ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

Քզի-Գասապա

1 և 2 Օրօր և Դարման կարեւոր գիւղեր ի Խորձ-
եան գաւառի, որոց առջեւէն կ'ընթանայ համանուն
գետակն Օրօր՝ որ է Եփրատայ մի վտակ: 3 Թագու-
հի: 4 փոխաբերաբար՝ օրիորդ կը նշանակէ: 5 Ինչո՞ւ:
6 հրաբորբ, տոչորեալ: 7 աղաւնիներուն վաճա-
ւանոցը:

Տ. ՆԵՐՍԻՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՀԱՆԵԼՈՒԿՔ

ՎԱՍՆ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ՄԱՐԴԿԱՆ

ԱՅԾՆ

Ձամէն չըլի ինքն ի քարեր,
Ունի ծախու մազէ կրճեր,
Գինւոյ ունի աղվոր տկեր,
Ի՛աւժա՛յ՝ ձրի դանկի կոթեր:

ՄԱՔԻ

Ի յԱստուածաբանն Էմմանուէլ,
Հէրն վայելուչ եւ գուռչ եկել,
Է բարի եւ աղվոր ընկեր,
Բայց զաւճն ուտէ զինչ զխոտեր:

ԿԱՔԱԻ

Նա կարմրագոյն հագնի վարտիք,
Ուխտառ ու մատ ունի շապիք,
Բողբի վինչն ըզկծիկ,
Կոխ առնէ զէտ զարապիկ:

ՋԱՂԱՅ

Մինն ի անդունդս տառապէր,
Մինն ի երեսն թքանէր,
Գլխովն ծախս հարկանէր,
Ըզկենարարն մեզ բերէր:

ԿԱՆԹԵՂ

Ապիտակ ձի կաւգեղ ու գէր,
Աղեղն սպիտակ փայլ ունէր,
Ճորտն զպախուրցն կու քաշէր,
Խրխնջելով ի վեր վազէր:

ՅԱԿՈՑ

Կուժն ու բրուտն կուռեցան,
Կուժն զբրուտն արար կալման,
Բրուտն էտծ կժին սահման,
Ձինքն խեղեց արար նշան:

ԱՐԵԳԱԿ

Տեսայ մանուկ մի ծնանէր,
Ի՛ր նոյն աւուրն մեռանէր,
Յետ թաղելոյն դարձեալ յառնէր,
Այլ գեղեցիկ զինքն ցուցանէր:

ՍԱԳՆ

Հանց գեղեցիկ հաւ իմաստուն,
Ոք չէ տեսել հանց եղ գիտուն,
Ձէտ գողն գայր մտանէր ի տուն,
Նա զաղաղակ բառնայր ի բուն:

ՄՈՋԻՄ

Կարի տեսայ ես շատ կարւան,
Որ կու իջնայր ի Խորասան,
Իչին բոկիկ են լանկուտպան,
Մերկիկ բառնան և դառնան գան:

ԿՐԻԱՅ

Չորքոտանի է զէտ զըռն,

Ու կու ածէ զէտ զթռչուն,
Խոտ նա ուտէր զէտ անասուն,
Ունի մզկիթ եւ ոսկրէտուն:

Ա Ղ Ե Ղ

Յորժամ զկոյն քաշեցին,
Որթն լինէր խիստ դիւրածին,
Բայց նա չուտէր զիւր մաւր ըստին,
Փութով երթայր արեան տեղին:

Լ ՈՒ Ս Ի Ն

Կայր նկանակ մի գեղապանծ,
Աշխարհաշէն փռան եփած,
Ի Եփոզէն իւրմէ խոռած,
Եւ ի նմանէ դարձեալ լրցած:

Հաւաքեց
Հ. Ե. Կ. Ն. Ե. Ա. Ն.

Զ Ա Ն Ա Չ Ա Ն Ք

Պ Ի Ր Մ Ա Ն Ի Ո Յ Փ Ի Ղ Ը

Բարեգեան լրագրի մը մէջ կը կարդանք.

Կարի հետաքրքրաշարժ երկիր մ'է այդ
անկախ Պիրմանիան զոր Անգլիա միացուց
իւր Հնդկական Կայսրութեան:

Մանտալէ հասնելով, անգլիացի սպա-
ներն ընդունուեցան պերճալուք սօրմի մը
մէջ, արքայական պալատան ետին որ ին-
քուն միայն կը դրաւէ քաղաքին կէսը:
Այդ պալատն, հրաշալիք արտակարգ ու-
թեան եւ մեծութեան, գրեթէ բոլորովին
գատարկ էր. կանայք, ներքինիք, պալա-
տականք, աստիճանաւորք դուրս ելած է-
ին: Սպիտակ փիղը միայն, նուիրական փիղը
կը գտնուէր իւր հրաշալի տաճարին մէջ,
գոհարեղէններով ծանրաբեռնեալ: Այդ
կնճիթաւոր աստուծոյն առջեւ ծունր դը-
րած, տասնի չափ քահանայներ կը շրջա-
պատէին զայն բարեպաշտութեամբ:

Եթէ նուիրական փիղը բոլորովին սպի-
տակ չէ, բան մ'որ շատ հազուադիւրէ է,
գէթ կաթով խահուէի գոյն ունենալու է.
նոյն իսկ աստուածութեան վիճակին կ'անց-

նի երբ կրնակին վրայ երկու սպիտակ բիծ
ունենայ, նման այն փիղին որում այցեւեցին
անգլիացի սպայք:

Իւր պալատան մէջ, որ անլուր ճոխու-
թիւն մ'ունի, կը բարձրանայ լայն տախ-
տակամած մը, ծածկուած ամենազգի ճո-
խութեամբք: Բարձրաստիճան աղնուա-
կաններն, սպասաւորի դեր կատարելով,
ոտքի վրայ կը կենան փղին քով, գլխա-
բաց եւ վայրահակ, կրօնական յարգանքով
մը նմա ընծայելով շաքարեղեգնի նորածիլ
ցօղուններ:

Փիղն, որ յոյժ նրբիմաց կենդանի մ'է,
չատ կը ձանձրանայ այդքան մեծարանք-
ներէ. անհամբերութեամբ ոտքը գետնին
կը զարնէ եւ իւր արհամարհոտ պատիճով
իշխողական շարժում մը կ'ընէ, յարկարծակի
կը վանէ իւր պալատականներն եւ քուր-
մերն, որոց կարծես կ'ըսէ Թալրանի նման.
« Զաւիազանց եռանդ, պարոնայք »:

Այլ մարդս գիտէ միայն ջնջել կամ խո-
նարհիլ. կա'մ անիծելու, կա'մ պաշտելու է:
Մեծարանքները կը կրկնապատկին եւ այդ
ակամայ աստուածն դուրս կը ծռէ:

Երբ, ոսկեղանակ ծածկոյթներով փաթ-
թուած, սպիտակ փիղը բաղնիք կ'երթայ,
շրջապատեալ պալատականներով եւ երա-
ժիշտներով, ժողովուրդը ծունր կը դնէ ա-
նոր ճանքուն վրայ, կը փառաբանէ, օրհ-
նէնքներ կ'ողղէ եւ պամպուլի ցօղուններ
կը կարկառէ նմա, զորս փափկութեամբ
կ'առնու իւր նուիրական պատիճով, որով-
հետեւ նրբամիտ անասունն շատ լաւ կ'ըմ-
բռնէ իւր արքայի պաշտօնը:

Բնականաբար նախամեծար պիտի հա-
մարէր իւր ազատութիւնն եւ յօժարափոյթ
պիտի երթար անտառաց խորն՝ բերկրա-
պատար գոչիւններ արձակել կամ սիրա-
վառ պատիճովը փայփայել ընկերուհի մը
մաքրափայլ ակօսյներով: Այլ աստուած-
ըրած են զայն որովհետեւ սպիտակ բիծ մը
ունէր կռնակին վրայ, եւ հանճարեղ կեն-
դանին կը համակերպի:

Սիամի թագաւորութեան մէջ, նուիրա-
կան փիղն շատ աւելի յարգանք կը մե-
ծարուի: — Պանքոքէն սեկնելու առեւս,
կը պատմէ Ճոն Պօինկ, դաշնադրոց ստո-
րագրութեանէն յետոյ, Սիամի թագաւորէն
առ Անգլիոյ թագուհին ուղղեալ նամակ մը

յանձնուեցաւ ինձ պաշտօնապէս : Այդ նամակն , ոսկի տառերով զրուած , պահուած էր թանկագին տուփի մը մէջ , որ ականազարդ բանալիով մը կը գոցուէր : Հետը գտնուող բազմաթիւ առարկայից մէջ կը գտնուէր նուիրական ընծայ մը , որ էր սպիտակ փղին պոչէն կտրուած եւ ոսկի թելով մը կապուած մագերու փնջիկ մը :

Ստուգիւ փիղն հանճարեղ ու դիտուն կենդանի մ'է , իմացականութեամբ օժտեալ , սակայն ինչո՞ւ համար այդքան մեծարանք եւ այդքան տարօրինակ ու գժնւճ դաւանութիւն սպիտակ անասնոյ մը : — Պատճառն յոյժ պարզ է : Հնդկի կրօնից մէջ , փիղն ամենէն մեծապանծ , ամենէն վեհաշուք մարմնաւորումն է Պուտտային եւ արքայական ուրուականները կը սիրեն ապաստանիլ այդ յաղթանդամ հաստամորթից մարմնոյն մէջ , ուր բնականաբար աւելի հանգիստ կ'ընեն քան թիթեռնիկի մը կամ եղնակի մը մէջ :

ՄԱՍԻՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՌԱՋԱՐԿԵԱԼ ԽՆԴԻՐՔ

ԹԻԻ 21.	(Մասիս թիւ 3814)
» 22.	» » 3814)
» 23.	» » 3815)
» 24.	» » 3816)

ԽՆԴԻՐ

ԹԻԻ 25.

Ա. Բ. Գ. Դ. Ներգծելի (էսքուրիթիւլ) քառակող մ'է որոյ անկիւնագծերը զերար կը կտրեն ի Մ :

Մ կէտէն Մ α , Մ β , Մ γ եւ Մ δ ուղղահայեացիները կ'ընցնենք , քառակողին կողերուն վրայ եւ կը միացնենք α β γ δ կէտերն որք նոր քառակող մը կը կազմեն կազմեն : Ապացուցանել թէ սոյն քառակողը չըջագծելի (սիւքսքուրիթիւլ) է :

ԽՆԴԻՐ ԹԻԻ 16

ԼՈՒԾՈՒՄՆ

Առնենք 0 չըջանական որոյ չըջագծեալ է

է Ա. Բ. Գ. Դ. զուգահեռագիծ քառակողն (պատկերը չինել) :

Խնդրոյն առաջին մասն ապացուցած կը լինինք եթէ ապացուցանենք թէ Ա. Բ. եւ Բ. Դ. անկիւնագծերն ուղիղ անկեամբ կը կտրեն զիրար . Արդարեւ գծենք Ա. Օ , Բ. Օ , Օ. Գ. եւ Օ. Դ. որք Ա. , Բ. , Գ. եւ Դ. անկեանց երկատիչներն են : Ա. Օ. Բ. եւ Ա. Օ. Դ. եռանկիւններն ուղղանկիւն են , որովհետեւ Ա. եւ Բ. անկիւնները յաւելուածական լինելով ըստ ենթացողութեան Ա. Բ. Օ. + Բ. Օ. = 1 ուղ. անկ . որով եւ Ա. Օ. Բ. = 1 ուղ. անկ . Նոյնպէս կ'ապացուցանենք ալ թէ Ա. Օ. Դ. ինչպէս նա եւ Բ. Օ. Դ. եւ Գ. Օ. Դ. անկիւններն ուղիղ են : Այս անկեանց ուղիղ լինելով Ա. Օ. Գ. եւ Բ. Օ. Դ. գծերն ուղիղ են եւ Ա. Բ. Գ. Դ. քառակողին անկիւնագծերը կը կազմեն , հետեւաբար Ա. Բ. Գ. Դ. շեղանկիւն մ'է :

2.— Գծենք Օ σ որ ուղղահայեաց է Ա. Դի վրայ : Ա. Օ σ եւ Տ. Օ. Դ. եռանկիւնները կուտան .

$$\frac{\text{Օ. Դ.}}{\text{Ա. Օ.}} = \frac{\text{Տ. Դ.}}{\text{Օ. Տ.}}$$

$$\text{Բայց , } \frac{\text{Օ. Դ.}}{\text{Ա. Օ.}} = \frac{\text{Բ. Դ.}}{\text{Ա. Գ.}} \text{ եւ } \text{Տ. Դ.} = \sqrt{\text{Օ. Դ.}^2 - \text{Օ. Տ.}^2}$$

$$= \sqrt{\frac{1}{4} \text{ Բ. Դ.}^2 - \text{Օ. Տ.}^2} \text{ եւ վերջապէս } \text{Օ. Տ.} = \zeta :$$

Ուրեմն կ'ունենանք հետեւեալ հաւասարութիւնները .

$$\frac{\text{Բ. Դ.}}{\text{Ա. Գ.}} = \frac{\sqrt{\frac{1}{4} \text{ Բ. Դ.}^2 - \zeta^2}}{\zeta} , \text{ որոյ երկու եզրերուն}$$

ալ քառակուսին առնելով ,

$$\frac{\text{Բ. Դ.}^2}{\text{Ա. Գ.}^2} = \frac{\frac{1}{4} \text{ Բ. Դ.}^2 - \zeta^2}{\zeta^2} = \frac{\text{Բ. Դ.}^2 - 4 \zeta^2}{4 \zeta^2}$$

եւ կամ ,

$$\frac{\text{Բ. Դ.}^2}{\text{Ա. Գ.}^2} = \frac{\text{Բ. Դ.}^2}{4 \zeta^2} - 1$$

Այս վերջին հաւասարութեան երկու եզրերն ալ Բ. Դ.ով բաժանելով ,

$$\frac{1}{\text{Ա. Գ.}^2} = \frac{1}{4 \zeta^2} - \frac{1}{\text{Բ. Դ.}^2}$$

որ ըսել է ,

$$\frac{1}{\text{Ա. Գ.}^2} + \frac{1}{\text{Բ. Դ.}^2} = \frac{1}{4 \zeta^2}$$

զոր պարտ էր ապացուցանել :

ԱՆՈՒԱՆՔԻ ԼՈՒԾՈՂԱՅ
Տ. Կ. ՆԱԼԱՍԱՐԴԵԱՆ, ԻԳՎԻՐ

Թիւ 21 խնդրոյ մասին որ և է լուծումն հասած չէ մեզ տակաւին, ուստի եւ կը յետաձգենք զայն :

Տ. Կ. ՆԱԼԱՍԱՐԴԵԱՆ. ԻԳՎԻՐ. — Հորիզոն և ծովու երես միենոյն են :

ՓՈԳՐ ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆՔԻ ՄԱՍԻՍԻ

Տ. Ա. Ծ. ՕՐԱՏՈՒ. — Մասիսի ձեր բաժանորդագրութեան պայմանաժամը լրացած է. հաճեցէք փութով նորոգել զայն, եթէ կ'ուզէք որ թերթերու առաքումը շարունակուի :

Տ. Պ. ԵՆ ԵՂԲ. Յ. Ա. ՕՐԱՏՈՒ. — Նշանակէ :

ՇԱԲԱԹԱԿԱՆ
ՍՈՒՐ ՀԱՆԴԱԿ

11 Ապրիլ 1886

Պուլկարական խնդիրը դանդաղ կերպիւ կ'ստանայ իւր լուծումն : Թէ եւ Դեսպանախորհուրդն սկզբամբ կարգադրեց զայն, սակայն մանրամասնութեանց մէջ կ'նձխուներ անպակաս են : Աղեքսանդր Իլխանն համակերպելով հանդերձ մեծ Տէրութեանց որոշման ի մասին թուրքո-սլովակարական Պայմանագրոյն, բողբած է անոր առաջին յօդուածին դէմ որ կը վերաբերի իւր կուսակալութեան հնգամեայ պայմանաժամին : Իլխանին այս վերապահումն ըմբռնել զիւրին է, երբ աչքի առաջ բերենք Պուլկարիոյ եւ Արեւելեան-Բուսթիլի մէջ տիրող մտաց գրգռումն. ժողովրդեան մէկ մասն անբաւական համարելով Իլխանին ձեռք բերած առանձնաշնորհումներն, աւելի լայնարձակ Միութեան մը կը փափագի. իսկ միւս մասն գոհ կ'երեւի իրաց վիճակէն. ուստի Իլխանն առաջիկային մէջ պատասխանատուութենէ զերծ մնալու եւ իւր իշխանութիւնն աւելի ամրապնդելու համար,

Պուլկարիոյ Երեսփոխանական Ժողովն ի նիստ հրաւիրած է ազգին ներկայացուցչաց կարծիքն առնուլ համար. այս ժողովոյն պիտի մասնակցին նաեւ Արեւ.-Բուսթիլի գաւառին երեսփոխանը :

Երբ մէկ կողմէ այս ձեռնարկներ կը լինին, Իլխանին կուսակալութեան պայմանաժամի խնդիրը վերջնապէս որոշելու համար, միւս կողմէ գործադրուիլ սկսած են թուրքո-սլովակարական Պայմանագրի տրամադրութիւնք : Առաջին կէտն է ինքնօրէն գաւառին Կազմական Կանոնագրի վերաքննութիւնն որ պիտի կատարուի օսմանեան եւ պուլկար պատուիրակներէ կազմեալ Յանձնաժողովոյ մը ձեռամբ : Ո՛չ Իլխանն եւ ո՛չ Բ. Դուռը տակաւին պաշտօնապէս անուանած չեն իրենց պատուիրակներն. բայց, ըստ ամենայն հաւանականութեան, կայս. կառավարութեան ընտրելիք են Վ.սեմ. Ապրո Էֆէնտի եւ Իւլէմա Հայտար Էֆէնտի՝ անդամք Պետական Խորհրդոյ : Ապրո Էֆէնտի անդամ էր այն եւրոպական Յանձնաժողովոյն որ պատրաստեց Կազմական Կանոնագիրն. իսկ Հայտար Էֆէնտի երկու երեք տարիներ իբր Վազըֆներու պատուիրակ պաշտօնավարելով ինքնօրէն գաւառին մէջ, լիովին իրազէկ է այդ Կանոնագրոյն տրամադրութեանց : Երկուստեք գոյացեալ համաձայնութեամբ մը, Յանձնաժողովը չը պիտի գումարի ի Պոլիս կամ ի Սոֆիա, հետեւաբար Փիլիպէ կրնայ լինիլ գումարման կեդրոնն : Վերաքննութեան աշխատութիւնները պիտի աւարտին չորս ամիս պայմանաժամի մը մէջ եւ բարեփոխեալ Կանոնագիրը պիտի վաւերացուի ապա Դեսպանախորհրդոյն կողմէ : Որոշեալ միջոցն հազիւ պիտի բաւէ վերաքննելու համար Կանոնագիր մը որ 493 յօդուածէ բաղկացեալ է եւ ընդարձակ գաւառի մը վարչային եւ զինուորական կազմակերպութիւնը կը գծէ, ամեն մանրամասնութիւններով :

Միեւ նոյն ժամանակ, զինուորական Յանձնաժողով մը կը կազմուի գծելու համար Հռոդոս լեւան այն գաւառակաց սահմաններն, որք, ըստ թուրքո-սլովակար Պայմանագրին, ուղղակի կայս. կառավարութեան իրաւասութեան ներքեւ պիտի դրուին : Այս Յանձնաժողովոյն օսմ. պատուիրակ կարգուեցաւ Վ.Էհ. Սուլթանի թիկ-

նապահ Շաքիր փաշա որոյ կ'ընկերանայ, իբր քարտուղար, Բ. Դրան հայազգի պաշտօնատարներէն Նշան էֆէնտի ձիվանեան որ ծանօթ է ի մեզ իւր բանասիրական աշխատութիւններով եւ Արտաքին գործոց նախարարութեան Իրաւագէտ Խորհրդականնաց Սենեկին մէջ քարտուղարութեան պաշտօն կը վարէ :

Բ. Դրան այս երկու Յանձնաժողովոց անուանմամբ մասամբ ազատելով խնդրոյն գլխաւոր հոգերէն, իւր ուշը կեդրոնացուցած է Յունաստանի վրայ : Հելլենական Խորհրդարանը վստահութեան քուէով մը հաստատեց Պ. Տէրեանի քաղաքականութիւնն և քուէարկեց խնդրուած վարկերն, որով Եօրկիոս Թագաւորի կառավարութիւնը փութոյ պնդութեամբ յառաջ կը տանի իւր զինուորական պատրաստութիւններ : Բ. Դրան ստիպողական ձեռնարկներուն վրայ, մեծ Տէրութիւնը որոշած են վերջնագիր մ' ուղղել Աթէնքի Դահլիճն . բայց թէ ի՞նչ պիտի լինի հետեւանքը, եթէ Յունաստան չը հպատակելով այդ վերջնագրոյն, մերժէ ցրուել իւր զօրքերն, այս կէտ մութ կը մնայ եւ կասկած կայ թէ Տէրութեանց միջեւ անհամաձայնութիւն կը տիրէ ձեռք առնուելիք ճշդողական միջոցներուն նկատմամբ : Եւ այդ անհամաձայնութիւնն իսկ է որ ոյժ կուտայ Յունաստանի նման փոքր եւ տկար պետութեան մը որ չը սոսկաց դեռ Եւրոպական միացեալ ահեղ նաւատորմին սպառնալիքներէն : Ֆրանսա եւ Ռուսիա յայտարարած են թէ իրենք չը պիտի մասնակցին ծովային գործողութեան մը, եթէ միւս Տէրութիւնը աւոր հարկը տեսնեն . իսկ Անգլիա, Իտալիա, Աւստրիա եւ Գերմանիա վերջնապէս որոշած են ետ կոչել իրենց Աթէնքի դեսպաններն եւ պաշարել հելլենական նաւահանգիստները, եթէ Յունաստան մերժողական պատասխան տայ Եւրոպիոյ խաղաղութիւն :

Այս պարագայից մէջ, արտասովոր կարեւորութիւն մը կ'ստանայ Ռուսիոյ Կայսեր ուղեւորութիւնն ի Լիվաութիա (Նրիմ) : Սեփաստիւղի նաւահանգիստը կը թողու հոսկ ուրեմն իւր լքեալ վիճակն եւ կը պատրաստուի պատասպարել ի մօտոյ զօրաւոր նաւատորմ մը : Անդ կը գտնուի Ջարն մէկ

քանի շաբաթէ հետէ իւր գերդաստանին հետ եւ այսօր մայրաքաղաքէս կը մեկնի Վսեմ Սէրվէր փաշա՝ Վեհ Սուլթանի յարգանքներն ու բարեւները տանելու համար Ադեքսանդր Գ. Կայսեր : Երկու օր առաջ Լիվաութիա ուղեւորեցաւ նաեւ ռուսական դեսպանն՝ ընկերակցութեամբ Աթէնքի ռուսական դեսպանին որ աստ եկած էր միանալ Պ. Նէլիտովի : Աւելորդ է ըսել թէ դիւանագիտաց այս համախմբումը Ջարին շուրջն իրենց մեծ նշանակութիւնն ու կշիռն ունին օրուան քաղաքական կացութեան վրայ :

* * *

Մայրաքաղաքիս եւրոպական հնագոյն և կարեւորագոյն թերթն՝ Լեփեդ Նեբլա, որ 1882ին խափանուելով, անկից ի վեր կը հրատարակուէր Իոթէրն Էֆէրէ անուամբ և քանի մ'ամիս առաջ դարձեալ խափանուած էր, շաբթուս սկիզբն հրատարակուիլ սկսաւ իւր նախկին անուամբ և տնօրինութեամբ Պ. Էտկար Հուրդէյբըրի որ Պաքանեան խնդրոյն հրատապ օրերուն մէջ Պուլկարիա գնացած էր իբր թղթակից Թայֆլի :

Անգլո-Փրանսական թերթին խափանումն զգալի սլակաս մը թողուցած էր տեղական օտար մամուլն մէջ, ուստի դահուութեամբ ողջունուեցաւ իւր վերաբացում որոյ հրամանն ուղղակի Վեհ Սուլթանին կողմէ արուեցաւ :

Տ. Ա.

ԿԵԱՆՔԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ԱՊՈՒՇԸ

ԳՐԵՑ

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

(ՀՐԱԶԴԱՆ)

Կը վաճառուի ՊՈԼԻՍ հայ գրավաճառաց, ջրավաճառաց եւ թղթավաճառ Ջարեհ էֆ. Թորոսեանի քով, ՂԱԼԱԹԻԱ Արեւելի Խմբագրատունը եւ Արշակ եւ Վրոյր Էֆէնտիներու թղթավաճառանոցներն, եւ ԲԵՐԱ Պ. Վայսի գրատունը :

Գին 100 փարայ

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻ ԻՐԱԳՐՈՅ